Վարդան Մակիչյան

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բանալի բառեր - Գերմանիայի հայ համայնք, հայկական լոբբինգ, Գերմանիայի Դաշնություն, հայկական սփյուռք, արտագաղթ, Հայ Առաքելական եկեղեցի, Հայոց ցեղասպանություն, ԼՂՀ ներկայացուցչություն:

Աշխարհով սփռված հայկական սփյուռքը իր այսօրվա կառուցվածքով, կարելի է ասել, առաջացել է 1915 թ.-ի Հայոց ցեղասպանության պատճառով, երբ հարյուր հազարավոր հայեր թողել են իրենց տունն ու տեղը և փրկության հույսով բռնել գաղթի ճանապարհը՝ հաստատվելով աշխարհի տարբեր ծագերում: Սակայն Ցեղասպանությունից առաջ էլ հայկական մշակույթի ու կենցաղի անբաժան մաս են կազմել գաղթօջախները:

Ներկա դրությամբ աշխարհում ապրում է մոտ 10 միլիոն հայ, որոնցից 3 միլիոնը Հայաստանում, այսինքն հայերի գերակշիռ մասն ապրում է բուն հայրենիքից դուրս: Հետագայում հայրենիք վերադառնալու տեսլականն այնքան էլ մեծ չէ[1]:

Մեծ սփյուռքը, իհարկե, ունի բազմաթիվ դրական կողմեր, սակայն պետք է կարողանալ այդ հնարավորությունները ճիշտ նպատակին ծառայեցնել:

Հայերի ներգաղթը դեպի Գերմանիա տեղի է ունեցել մի քանի հոսքով: Նոր ժամանակներում Գերմանիայում բնակություն հաստատած առաջին հայերն ուսանողներ էին, ովքեր կայսերական Գերմանիա էին եկել ուսանելու և 1885 թ. Լայպցիգում հիմնել Գերմանիայի տարածքում առաջին Հայ ուսանողների միությունը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ցեղասպանությունից մազապուրծ հայերը քիչ քանակով եկան Գերմանիա և բնակություն հաստատեցին հիմնականում Բեռլինում և Համբուրգում: Հարկ է նշել, որ արտագաղթը Գերմանիա կարող էր շատ ավելին լիներ, քան կար, եթե Գերմանիան այդ ժամանակ հանդես չգար Թուրքիայի կողմից: Չնայած դրան՝ 1914 թ-ին Բեռլինում հիմնվեց «Գերմանահայկական ընկերություն»-ը (Deutsch-Armenische Gesellschaft e.V.), ինչն էլ հիմք ծառայեց, որ 1923 թ.-ին կազմավորվի առաջին օրինական հայկական համայնքը՝ «Բեռլինի հայկական գաղութը» (Armenische Kolonie zu Berlin)[2]:

Համայնքային կյանքն անկում ապրեց Երկրորդ համաշխարհայինի ժամանակ, սակայն սկսեց ակտիվանալ 1965 թ.-ից[3]: Երկրորդ համաշխարհային պատերազ-

---

[1] Տե՛ս Libaridian Gerard J.,1993, Entwiecklung und Struktu der armenischen Diaspora, էջ 163:

[2] Տե՛ս Tauber Andrea, Hamburg 1999, Armenier in Hamburg. Ethnographie einer Gemeinde in der Diaspora:

[3] Տե՛ս Schaefgen Annette, Berlin 2006, Schwieriges Erinnern. Der Völkermord an den Armeniern , էջ 73:

մից հետո շատ հայեր հեռանում էին ԽՍՀՄ-ից Գերմանիա: Ոմանք նաև՝ այդտեղից ԱՄՆ:

1960-ական թվականների բազում հայկական ընտանիքներ Գերմանիա են տեղափոխվել Թուրքիայից՝ աշխատելու նպատակով: Նրանք որպես հայ չեն գրանցվել, քանի որ նրանց անձնագրերը թուրքական էին: Ստացվում է, որ հիշյալ մարդիկ ծպտյալ հայեր էին՝ թուրքական ազգանվամբ: Այդ իսկ պատճառով մինչև օրս չի հաջողվում ճշտել հայերի իրական թիվը Գերմանիայի Դաշնությունում[1]:

1960-1985 թթ. Թուրքիայից գաղթող 25.000 հայերից մոտ 8.000-ը հաստատվել են Գերմանիայում: Դեպի Գերմանիա հայ գաղթականների տարագրվելու պատճառը Իրանում 1979 թ.-ի Իսլամական հեղափոխությունն էր, նաև՝ 1975-90-ական թվականներին Լիբանանում քաղաքացիական պատերազմը: Այդ երկու պետություններում գործում էին բավական մեծ հայկական համայնքներ, որտեղից էլ հազարավոր հայեր գաղթում էին տարբեր երկրներ, այդ թվում՝ նաև Գերմանիա: Այսպիսով 1965 թ.-ին Գերմանիայում մոտավորապես ապրում էր 2000-3000 հայ: Այդ ժամանակ դեռ չկային հիշատակության արժանի հայկական հաստատություններ: Սոսկ մի քանի եկեղեցական և մշակութային միություններ էին: 1960-ական թվականներին արևմտահայ գաղթականների համախմբման հետևանքով Գերմանիայի Դաշնությունում կազմավորվեցին առաջին հայկական գաղթօջախները[2]:

Սկսած 1965 թ.-ից՝ Օսմանյան կայսրությունում հայերի դեմ ցեղասպանության հիսունամյա տարելիցից, հիմք դրվեց (հետագայում՝ 1970-ական թվականներին ավելի մեծ թափ առավ) հայկական սոցիալական և մշակութային կազմակերպությունների ստեղծումը աշխարհով մեկ: Այս ամենի հետ մեկտեղ հայկական համայնքները Թուրքիայի դեմ գործունեություն ծավալեցին նաև պետական մակարդակով: ԱՄՆ-ում հայերի քաղաքական լոբբիի աճ նկատվեց: Սփյուռքի կազմակերպություններն աշխատանք էին տանում միջազգային հանրությանը ճանաչելի դարձնելու Ցեղասպանությունը և պահանջում, որ Թուրքիան ճանաչի կատարած ոճրագործությունը: Այս գործողությունները հետագա տարիներին լայն տարածում գտան: Դա հանգեցնում էր աշխարհով սփռված հայերի ազգային գիտակցության վերածննդին[3]:

Հայոց ցեղասպանությունը պետականորեն ճանաչելու խնդիրը դարձավ Գերմանիայում հայկական համայնքի ամենակարևոր գործը: Գերմանական զանգվածային լրատվական միջոցներում գնալով աճում էր հայկական խնդիրների մասին հրապարկումների թիվը[4]: 1969 թ.-ին կազմավորվեց «ԳԴՀ-ի և արևմտյան Բեռլինի հայկական միավորում»-ը, և մինչև 1975 թվականը հայկական միավորումներ ու գաղթօջախներ Բեռլինում, Քյոլնում, Համբուրգում, Մայնի Ֆրանկֆուրտում, Շտուտգարդտում և Մյունխենում:

---

[1] Տե՛ս Herbert Ulrich, München 2001, Gwschichte der Auseländerpolitik in Deutschland. Saisonarbeiter, Zwangsarbeiter Gastarbeiter, Flüchtlinge:

[2] Տե՛ս Schaefgen Annette, Berlin 2006, Schwieriges Erinnern. Der Völkermord an den Armeniern, էջ 73:

[3] Տե՛ս Cohen Robin 1997 London, Global Diasporasé An Intruduction, Routledge, էջ 48:

[4] Տե՛ս Schaefgen Annette, Berlin 2006, Schwieriges Erinnern. Der Völkermord an den Armeniern, էջ 77:

Հայերի կողմից ամենամեծ ներհոսքը դեպի Գերմանիա տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզումից հետո: Հայաստանի անկախության պայմաններում երկրում գնալով աճում էր գործազրկությունը, կենսամակարդակի կտրուկ նվազում էր տեղի ունենում, հարյուր հազարավոր հայեր լքում էին հայրենիքը և բնակության ու աշխատանքի հույսով հաստատվում Եվրոպայում[1]:

Արտագաղթի մեծ պատճառ է հանդիսացել նաև 1988 թ-ի Սպիտակի աղետալի երկրաշարժը, որը բազմաթիվ մարդկանց թողեց անօթևան, քաղցած ու գործազուրկ: Նույն ժամանակահատվածում արտագաղթը մեծացավ Բաքվի և Սումգայիթի ջարդերի պատճառով: ՀՀ-ից արտագաղթող հայերի մի մասն էլ երկիրը լքեց պատերազմի պատճառով: Արտագաղթի թիվն ավելացավ նաև թուրքական շրջափակման հետևանքով:

Ըստ Գերմանիայում «Հայերի կենտրոնական խորհրդ»-ի՝ («Zentralrat der Armenier in Deutschland», ZAD) Խորհրդային Միության փլուզումից հետո Գերմանիա գաղթող հայերի հիմնական մասը ոչ այնքան Հայաստանից էին, որքան ԽՍՀՄ այլ երկրներից, առաջին հերթին՝ Ադրբեջանից: Ըստ այդ տվյալների՝ Գերմանիայում ԽՍՀՄ նախկին երկրներից բնակություն է հաստատել մոտ 15.000 մարդ, որոնցից մոտ 10.000-ը Անդրբեջանից:

Եվրոպայում Գերմանիայի Դաշնության հայկական համայնքը համարվում է երկրորդ ամենամեծը Ֆրանսիայի հայ համայնքից հետո: Գերմանիայում հայերի քանակի մասին տարբեր թվեր կան: Իրականում բարդությունն այն է, որ բազմաթիվ հայեր տարբեր երկրների անձնագրերով են գրանցվել Գերմանիայում, ու դրանով իսկ բարդացրել հայերի իրական քանակը հաշվել Գերմանիայում: Ըստ ներկա տվյալների՝ այստեղ ապրում է 50.000-55.000 հայ[2]:

Գերմանիայի հայ համայնքի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրա անդամներն այստեղ են եկել ամենատարբեր երկրներից, ուստիև ունեն միանգամայն տարբեր մշակութային հատկանիշներ: Ըստ գերմանացի սոցիոլոգների վերլուծությունների՝ առանձնացվում է գերմանաբնակ հայերի երեք հիմնական խումբ: Առաջին խմբի մեջ մտնում են «արևմտյան հայերը» (Westarmenier), որոնք եկել են Թուրքիայից և արևմտահայկական մշակույթի կրողներն են, երկրորդ խմբի մեջ մտնում են «արևելյան հայերը», որոնք Գերմանիա են եկել Հայաստանի Հանրապետությունից և Իրանից: Հաջորդ խմբի հայերի մեծ մասը Լիբանանից է, Իրաքից և Մերձավոր Արևելքի այլ երկրներից, որ կազմում են «արաբական» խումբը: Վերջին խումբը՝ Ադրբեջանից Գերմանիա եկածներն են, որոնց թիվը ոչ պաշտոնական տվյալներով մոտ 15.000 է: Այս խմբի հայերը հիմնականում հաղորդակցվում են ռուսերենով, որով վերջիններս առանձնանում են Գերմանիայում ապրող մյուս հայերից: Գերմանիայի հայերի Կենտրոնական խորհրդի կարծիքով՝ հենց նախկին խորհրդային երկրների հայերն են, որ մեծ մասնակցություն չունեն սփյուռքի գոր-

[1] Տե՛ս Dreusse Mareike, 2008 Frankfurt/Main, Die armenische Diaspora in Deutschland, էջ 5:
[2] Տե՛ս Ordukhanyan Azat, 2008 Erfurt, Armenier in Deutschland. Geschichte und Gegenwart, էջ 25:

ծունեությանը: Նրանք ավելի շատ անդամակցում են այլ կազմակերպությունների, քան՝ հայկականների[1]:

Գերմանիայի հայերի կենտրոնական խորհուրդն իր հիմնական գործն է համարում Գերմանիայի հայերի ազգային ինքնության ճանաչման բարձրացումը, որը արտահայտվում է մշակույթի, կրոնի և լեզվի պահպանմամբ ու ամրապնդմամբ: Գիտակցելով, որ այս բաղադրիչների կորուստը վտանգավոր է հիմնականում երեխաների ու երիտասարդներ համար (նրանք հիմնականում ծնվել ու մեծացել են Գերմանիայում և կարող են անուշադրության պատճառով ժամանակի ընթացքում ձուլվել), խորհուրդը հիմնական ուշադրությունը սևեռել է հենց այս թիրախային խմբի վրա, տարաբնույթ միջոցառումներ է կազմակերպում՝ բարձրացնելով երիտասարդների ազգային գիտակցությունը և ճանաչողությունը հայերենի, հայրենիքի և, առհասարակ, հայի մասին:

Այսպիսի նախագծերը, իհարկե, ֆինանսական մեծ միջոցներ են պահանջում, որն այսօր տեղի հայերը մեծ դժվարությամբ են ստեղծում: Բայց, օրինակ, Գերմանիայի Դաշնության իշխանությունների կողմից հրեական կենտրոնական խորհրդին պարբերաբար տրվում է բավական ֆինանսական խոշոր աջակցություն, ինչով էլ խորհուրդը կարողանում է պատշաճ ձևով իրականացնել իր համայնքի ազգային ծրագրերը: Գերմանիայի հայ համայնքը ֆինանսապես բավարարվում է իր միջոցներով, հայապահպանությունը հիմնականում իրականցնում է առանց վարձատրության: Հայոց լեզուն հիմնականում դասավանդվում է կիրակնօրյա դպրոցների միջոցով: Հայապահպանության ծրագրերից ամենաէականը Հայաստանի կառավարության կողմից իրականացվող ծրագիրն է, որով հայ ուսանողները կարող են հայրենիքում անցնել հայոց լեզվի չորսշաբաթյա դասընթացներ:

Գերմանիայի հայերի միավորման գործում իր մեծ լուման ունի նաև Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին: ՀԱԵ-ի Գերմանիայի թեմը հիմնվել է 1991 թ-ին Քյոլնում, որտեղ էլ այժմ գտնվում է թեմի առաջնորդարանը (թեմական առաջնորդ՝ Տեր Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյան): Առաջնորդարանի հիմնական եկամուտը թեմական տուրքն է, իսկ տուրք վճարողները եկեղեցական համայնքի անդամներ են, որ կարող են անդամակցել եկեղեցական բոլոր հանձնախմբերին: Վերջիններս ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք:

Հայկական եկեղեցու և առաջնորդարանի շինությունները հայությանն են տրամադրել գերմանական կաթոլիկ և բողոքական եկեղեցիները: Գերմանիայ Վեցլար քաղաքում գործում է հայ բողոքականների փոքրաթիվ համայնք՝ պատվելի Հակոբ Ջամբազյանի առաջնորդությամբ: Նշենք, որ մինչ 2010 թ.-ը նրանք բարեգործական նշանակալի աշխատանքներ էին ծավալում Հայաստանում և Արցախում[2]: Սակայն այս ոլորտում էլ կան դեռ շատ անելիքներ: Նախ նշենք, որ եկեղեցական սպասավորների քանակը չի բավարարում բոլոր հավատացյալներին ծա-

[1] Տե՛ս Сумленны Сергей , 2006, Армянская диаспора германии: от непризнания к интеграции, էջ 114:

[2] Տե՛ս http://www.germany.mfa.am/hy/community-overview/:

ռայելու համար, հայերով խիտ բնակեցված բնակավայրերում հնարավորություններ չկան ստեղծելու եկեղեցիներ:

Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմը նույնպես մեծ դեր խաղաց հետխորհրդային շրջանում գերմանահայերին կենտրոնացնելու գործում:

Հայոց ցեղասպանությունն ինչպես ամբողջ աշխարհի հայերին, այնպես էլ Գերմանիայում բնակվող հայերին միավորող ամենամեծ գործոնն է: Ամբողջ աշխարհում կարևոր աշխատանքներ են կատարվում Հայոց ցեղասպանության հարցը միջազգային ասպարեզում բարձրաձայնելու և ոճրագործին պատժելու ուղղությամբ: Այդ գործընթացին իրենց մասնակցություն են բերում Գերմանիայում ապրող հայերը: Հայկական համայնքը Գերմանիայի իշխանությունների հետ բազմաբովանդակ աշխատանքներ է կատարում, որ կարողանա Գերմանիայում հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Գերմանիան մինչև օրս չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, իսկ Գերմանիայի իշխանություններն ամեն անգամ հայտարարությամբ հանդես գալիս, ցեղասպանության փոխարեն օգտագործում են ոճրագործություն, հոլոքոստ և նմանատիպ բառեր: Ցեղասպանության ճանաչման ուղղությամբ Գերմանիայում մշտապես աշխատանքներ տարվել են՝ սկսած Սողոմոն Թեհլերյանից մինչ մեր օրերը: Չնայած Գերմանիայում թուրքական համայնքի մեծությանը և նրա հակահայկական քարոզչությանը, այնուամենայնիվ գերմանաբնակ հայերը չեն զիջել իրենց դիրքերը: Հարկ է նշել, որ 2015 թ.-ի Ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումները բավական կազմակերպված էին և դրականապես նպաստեցին Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Այդ մասին է փաստում Ցեղասպանության միջոցառումներից մեկի ժամանակ Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկի՝ Բեռլինի Մայր տաճարում հնչեցրած հայտարարությունը. «Այդ հայերի ճակատագիրը պատմության մեջ զանգվածային ոչնչացման, էթնիկ զտման, կոտորածի, այո, Ցեղասպանության հստակ օրինակ է, որոնցով 20-րդ դարը հիշվում է «սարսափելի ձևով»[1]: Իսկ սույն թվականի փետրվարի 25-ին Կանաչների կուսակցության անդամ Ջեն Օզդեմիրի կողմից Բունդեսթագի օրակարգում քննարկման էր դրվել «Հայոց ցեղասպանության մասին» բանաձևը, որտեղ ներկա էր նաև Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը[2]:

Հայկական համայնքը զգալի աշխատանքներ է կատարում կապված Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ: Դրանք հիմնականում այն միջոցառումներն են, որ հնարավորություն են տալիս ճանաչելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության էությունը. հրատարակվում են տարբեր գրքեր և հոդվածներ, լրատվական նյութեր այդ հարցի վերաբերյալ: Նշենք, որ Գերմանիայի իշխանություններն անմասն չեն ԼՂՀ-ի հիմնախնդրից ու բազմիցս նշել են, որ հարցը պետք է կարգավորվի միջազգային նորմերին համապատասխան և բացառապես խաղաղ ճանապարհով: Գերմանիայում գործում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչություն՝ Հարություն Գրիգորյանի գլխավորությամբ[3]:

---

[1] Տե՛ս http://www.zeit.de/politik/deutschland/2015-04/armenien-joachim-gauch-voelkermord-genozid:

[2] Տե՛ս http://www.gruene-bundestag.de/themen/internationale-politik/es-war-voelkermord_ID_4395236.html:

[3] Տե՛ս http://www.nkr.am/hy/permanent-representations/104/:

Այսպիսով, Գերմանիայում չկան մեծ կամ կենտրոնացված գաղթօջախեր, ինչպես, օրինակ ԱՄՆ-ում կամ Ֆրանսիայում: Այս գաղթօջախների հետ համեմատած՝ Գերմանիայի հայ համայնքը համարվում է ավելի երիտասարդ: Հայերը սփռված են ամբողջ դաշնային տարածքներում, որ պայմանավորված էր Գերմանիայում փախստականների մասին օրենքով (ըստ այդ օրենքի՝ փախստականներին բաշխում էին հավասարապես դաշնային տարածքների միջև): Հայկական համայնքը Գերմանիայում այսօր բավականաչափ կայուն է և մեծ հաջողությունների է հասել, քանի որ այստեղի հայերը միասնական են ու համախմբված կենտրոնական խորհրդի ու Հայ Առաքելական եկեղեցու շուրջ: Այդ կառույցներն էլ ըստ էության օգտագործում են համայնքի ուժը:

Հայկական համայնքները հիմնականում կենտրոնացված են Բեռլինում, Քյոլնում, Համբուրգում, Լայպցիգում և Մյունխենում: Գերմանիայում ընդհանուր առմամբ 40-ից ավելի հայկական միավորումներ և կազմակերպություններ կան: Համոզված ենք, որ հայ համայնքը Գերմանիայում կշարունակի ավելի ամրապնդվել՝ պահպանելով իր ազգային դիմագիծը, ինքնությունը, ավելի կսերտացնի կապը հայրենիքի հետ՝ փորձելով օգտակար լինել նրան:

Вардан Макичян, Формирование и развитие армянской общины в **Германии,** - В данной статье нами были исследованы этапы формулирования и развития армянской общины в Германии. Также мы обратились к тому, как управляется духовная и светская жизнь общины, какие решения даются вопросам сохранения армян и другим проблемам общины в процессе принятия Армянского геноцида и НКР, кто и какие организации проводят работу и каких результатов достиг армянский лоббинг в этой стране.

Vardan Makichyan, The Formation and Development of Armenian Diaspora in Germany, - The periods of the formation and development of Armenian Diaspora in Germany are studied and presented in this article. We also have discussed how the secular and spiritual life of the community is organised, what kind of solutions are given to the problem of identity preservation and to other problems, which oraganizations and people are involved in the process of the Recognition of the Armenian Genocide and NKR and what results Armenian lobbing achived in that country.

Վարդան Մակիչյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ: